

կուճն իսկ (Կիրակի, 12 Ապրիլ), անոնք կը վերսկսէին մինչև երեքշաբթի վերջ գտնելով :

Այս անիմաստ մոլեգնութեան իմաստը բաւարար կերպով հասկնալու համար, անհրաժեշտ է քիչ մը յետ երթալ, երթալ նոյն իսկ մինչև Սահմանադրութեան վաղորդայնը :

Սահմանադրական վարչութեան վերահաստատումը դէշ կերպով կը պատշաճէր շահերուն այս երեւելիներուն՝ որոնց հին վարչութիւնը ապօրէն հեղինակութիւն մը կ'ապահովէր : Ուրեմն ինքնաբերաբար այդ երեւելիները կը սնուցանէին ամենամեծ մախանք մը նոր վարչութեան դէմ, և, շատ բնականօրէն, ընդդէմ Հանրուն՝ որոնք պատրաստ էին իրենց արիւնք թափելու՝ այդ Սահմանադրութիւնը սահպանելու համար : Այսօրէս, այդ մարդերը մտածեցին որ՝ նոր բէժմին դէմ յաջողութեամբ յարձակելու համար նախ պէտք էր Հայերը բնաջնջել : Ամբոխին տգիտութենէն և սիամասութենէն օգտուելով, ամէն կողմ Հայերու դէմ տարածայնեցին զրպարտութիւններ — զրպարտութիւններ որոնք ժողովուրդի ամենէն փափուկ զգացումները վիրաւորելու բնոյթն ունէին :

Ասիկա չէր ամէնը :

Մերթ կ'ըսուէր թէ Հայերը կը ղինուէին իսլամները ջարդելու և անոնց կիները առեւանգելու նպատակով : մերթ սուա գրոյցներ կը հանէին՝ որոնց համեմատ Հայերը իրբեւ թէ մեղանշած ըլլան իսլամական կրօնքին դէմ և անարդամ՝ բարեպաշտական հաստատութիւնները :

Այսօր ստուգուած է որ իսլամ բնակչութիւնը գրքդուրու ձգտող այն սուտերը տարածուած էին ամբողջ Անատոլիոյ մէջ : Հին վարչութեան օրով ջարդեր տեսած նահանգներու կարգ մը երեսփոխաններ մեղի կը